


ՊԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Ֆր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Արևմտահայերէն համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Ամերիկայի համար	3 շր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	1.50 "

Մանուցումն տողը սուս լին արեւիկն համար 40 ս. իսկ վերջին արեւիկն համար 20 սանթիմէ հ. երեք թիւ անցի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ:

Վստեայի համար ձեռք 10 սանթիմ



R. P. Kalemantian, Mechitaristengasse (Austria), W. 4.

Նամակ և գրուի գրիկի հսկայագրութեան հասցիին .

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արևմտահայերէն համար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՈՒՄԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՆՍԻՒԻ ԶՈՐԵՔԻՆԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Գրութիւնք և չն՝ տրուի

«ՇԱԲԱԹ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՄԵՆՔ ԵՒ ՌՈՒՍՆԵՐԸ

Բ.

Ընդունենք որ սօցիալիզմը մարդկութեան խոստացած ընկերային կազմակերպութիւնը, որի իրականացման միջոցին պէտք է թագաւորեն դանձաւոր համայնքի համար, համայնքը անհատի համար՝ «աշխատութեան և արտադրութեան վայելումի հաւասարութիւն» և «հանրային սեփականութիւն» սկզբունքները, ինչի վերջին իդէալական կազմակերպութիւնը:

Բայց միթէ դա բա՛ւ է որ մեր սօցիալիստները քարձի թող անեն ներկայումս մեզ անհրաժեշտ ազգային ինքնուրոյն գոյութեան խնդիրը և իրենց ուժերը նւիրեն Ռուսական պետական կազմակերպութեան բարեշրջումին:

Արդեօք կարելի է՞ երեւակայել որ ֆրանսացի կամ իտալացի սօցիալիստները աշխատէին իրենց հայրենիքը միայնել և Եւրոպայի վրա ճնշող Գերմանիայի հետ որ պէսզի գերմանացի սօցիալիստներ ի հետ միասին աշխատէին տապալել գերմանական կայսրութիւնը և վերջը ճիգեր թափէին Եւրոպայում սեփական սօցիալիզմի խոստացած իդէալական կազմակերպութիւնը:

Մենք տեսնում ենք որ ոչ ֆրանսացի և ոչ իտալացի սօցիալիստները այդ տեսակ ձգտում չունին. ճիշդ է, նրանք աշխատում են կապիւլել միւս երկրների սօցիալիստներին, հետ, բայց և չեն մոռանում այն սկզբունքը, թէ ամէն մի ցեղին և ժողովրդին պատկանող սօցիալիստ իր երկրի մէջ պէտք է աշխատի իր ցեղակիցների համար բազմալի կազմակերպութիւնը ստեղծելու, որովհետեւ ոչ ոք չի կարող երաշխաւորել թէ սօցիալիստական սկզբունքների վրա պայտջում հիմնվելիք ֆրանսական կազմակերպութիւնը կը ցանկար թողորովին հրաժարվել

ֆրանսացի լինելուց:

Ձը մոռանք և այն որ սօցիալիզմի մեզ խոստացած իդէալական ընկերային կազմակերպութիւնը իրականանալու համար դարերի պէտքեր կայ, և ամենաքաղաքակրթված ժողովրդներն իսկ առայժմ միայն չեն հրաժարվում ազգայնութեան գաղափարից, այլ ընդհակառակը աւելի մեծ ճիգեր են թափում իրեն առանձին ազգեր գոյութիւն ունենալու և Եւրոպայի հէնց մենք, հայերս է որ պէտք է իսկոյն նւիրվենք ձուլվելու գաղափարին: Ձը մոռանանք և այն, թող սօցիալիստները չը վիրաւորվեն, որ չէ կարելի որոշապէս ասել թէ մարդկութեան համար սօցիալիզմի խոստացած ընկերային ամենաիդէալական և վերջնական կազմակերպութիւնը պէտք է լինի: Այսօր գոյութիւն ունի և անիշխանական վարդապետութիւնը, թէ և նոյնքան ծաղրված ու հալածված, որչափ շատ տարիներ առաջ սօցիալիզմն էր: Եւ ո՞վ կարող է երաշխաւորել թէ ապագայում էլ սօցիալիզմը անիշխանութեան հանդէպ այն գիրքը չը պիտի ունենայ, ինչ որ ունի այսօր բուրժուական Լիբերալիզմը սօցիալիզմի հանդէպ:

Ձը մոռանք ամենակարևորը, որ սօցիալիզմը մեր մէջ արագաբար և կանոնաւոր կերպով յառաջադիմելու համար հող չունի: Այն պայմանները, որոնք այսօր մեր սօցիալիստներին յալմար պայմաններ են երևում իրենց գործունէութեան համար, արւեստական են: Այսօր Թուրքիացի հայ բանւորները կապիտալիզմի արդիւնք չեն, այլ բռնութեան նրանք բոլորն էլ սեփականատէրեր են և բռնութիւնն է ըստիպել այդ սեփականութիւնը բարձի թող անել, և օտար աշխարհներում, նոյն սեփականութիւնը պահելու համար տուրքի և պարտքի դրամ շահիլ: Այդ անհատական սեփականութիւնները ի միասին վերցրած մեր հայրենիքն են կազմում, որոնք խլվում

են ու խլված են օտարներից և եթէ բոլորովին օտարների ձեռքը անցնեն, հայ համայնքը ոչինչ չի ունենայ և նա կը ձուլվի բոլորովին. նա կը լինի Ռուս, Անգլիացի, Ամերիկացի, Թուրք, Ռումանացի, Բուլգարացի սօցիալիստ, բայց ոչ հայ սօցիալիստ:

Բայց միթէ ցանկալի չէ՞, մի առանձին բարոյական պահանջ չէ՞, որ հայը իր հայրենիքը ունենայ և իրեն հայ միայն յառաջադիմէ կանոնաւոր բարեշրջումով և սպրի ու կազմակերպվի այնպէս, ինչպէս նրան կը թելադրեն ժամանակի պահանջները: Միթէ մի առանձին հրապուրանք չէ՞ պատճառում այն իդէալը, թէ հայը թող ինքնուրոյն կերպով առաջ գնայ և երբ մի օր եթէ ամբողջ մարդկութեան ցեղերը կը հրաժարվեն իրենց ազգայնութիւնից, մասնաւոր հայրենիքից, հայն էլ նոյն գոհարութիւնները կանի, իրր մարդկութեան ինքնուրոյն պարտաւորված, հասունացած ցեղ անդամ:

ՎԿՐԴՈ

«ԿՈՂՈՊՏՈՒՄ»

Ահա այս խորագրով, պարոն Չերազ իր թերթի 179 համարում մի յօդուած է հրատարակել Ռուս կառավարութեան մեզ վերաբերմամբ կատարած ազգակութեան արժիւ:

Յօդուածը փաստում է որ Պ. Չերազ այլ ևս ազատված է Ռուսի վրա զուր յոյսեր ունենալուց և ընդհակառակը կարծես համոզվել է որ Ռուս կառավարութիւնը ինքնաբերաբար միայն ֆրանսական կառավարութեան հետ չի կարող և հուսնել մեզ. որովհետեւ իր այդ ձգվող յօդուածը վերջացնում է հետեւել պարբերութիւններով, որը աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ներկայացնել: —

«Ուկազ»-ի առաջին մասի 3րդ յօդուածը սահմանում է որ այ-

սուհետեւ էլ հայերի իրենց եկեղեցուն նւիրած և կտակած անշարժ կալուածները և գումարները պիտի կառավարվեն նոր օրէնքի տրամադրութիւնների համաձայն:

«Մենք յոյս ունենք որ այլևս իր նւերները վտանգելու չափ ոչ մի միամիտ Ռուսահայ չի գտնվի և կայսերական այդ նոր դասէն ազդարարված մեր Ռուսահայ եղբայրները աւելի պէտք է գերադասեն իրենց լուծանքով հրատարակել թուրքալուծ, Պարսկաստանուծ և այլ տեղերում գտնվող մեր բալմաթիւ եկեղեցիները:

«Ուն վայրկեանից, երբ էլ մի անձի 16 դարեան աթոռանիստը յիստէմատիկ հալածանքի է ենթարկվել Գալիցիայի նման ֆանատիկոսների կողմից, ամեն մի հայի, որը հոգատարութիւն ունի իր ցեղի սպաքայի մասին, պարտականութիւնն է զօրեղացնել Սիսի կաթողիկոսութիւնը, որը ապահովէ այդ տեսակ կողպտիչական ձգտումների զոհ լինելուց: Հոշակաւոր Կերսէս Ենորհալու այդ աթոռանիստը ազատօրէն բարձրանում է Տարուսեան լեռների սիգապանձ ժայռերի մէջ, որոնց վրա երբէք չեն կարող տարածվել Մօսկովիտների արծի յափշտակիչ ճիրանները:

«Վերջին խօսք. մինչև որ Հայաստանը կամ կրիկիան քաղաքական անկախութիւն չունենայ, հայերի համար փրկութիւն չկայ Մահմետական երկրներում ներանք պէտք է կոտորվեն, քրիստոնեայ երկրներում պէտք է օտարանցնվեն, այսինքն բարոյապէս սպանվեն: Այս համոզումով էր որ անմահ ներսէս վարժապետեան պատրիարքը և իր նշանաւոր խորհրդակիցները, Օտեան և Սէրվիչէն 1876ից սկսած բարձրացրին հայկական հարցը, այս համոզումով էր որ մենք առաջին օրից սկսած մեր ճիգերը նւիրեցինք հայկական ինքնուրոյնութիւնը իրականացնելու, մեր ցեղի կենաց և մահու խնդրին»:

Վ.Արմենի

ԹԳԹԿՑՈՒԹԻՒՆ

Պուրջէշ, 16 օգոստոս 1903

Երէկ առաւօտ Ս. Աստուածաբանայ տօնի առթիւ տեղոյս եկեղեցին հաւաքուած էին խուռն բազմութեամբ հուստոացեալներ, եկեղեցոյ աւարտուած վերջը, խորհրդօրէնքի աւարտողութեան պահուն, ազգային ներքին տիար Մանուկ Իվանցօղլու դառնալով դէպի ժողովոյրը ազգուկերպով կը խօսի թաղականութեան անվախ վարմունքներու եւ մասնաւորապէս թաղական Տանիէլ Ետաքիմեանի մասին, որը իր անուն անգամ փոխած եւ 15 տարիներէ ի վեր Պուրջէշի թաղականութեան բարձր պաշտօն կը վարէ եւ վստահութեամբ բռնած է մասնաւորապէս իր թաղականներու հանդէպ: Ատենաօրէն սկսած անունով պահարկել Դանիէլ Ետաքիմեանը, որ գազանի նման աչքերը բացած իր մըստվածաւ եղբայրներու հետ միասին յարձակուեցաւ ձեր ազգայնի վրայ: Սոյն պարագային ծագեցաւ իրարանցում ժողովոյրի մէջ եւ սկսուեցաւ պոռալ, (ժող Տանիէլ, սուս Իվանցօղլու, եւ դառնալով ամբողջ դէպի Դանիէլին պոռագին, եւ ապա իր (եղբր դուրս) եւ 2-3 հոգի բռնած ստիպելով զինքը դուրս հանեցին: Բայց նա կատարած վայրենի գազանի նման կրկին ներս մտնալու փորձ արեւ, սակայն նորէն դուրս բերին իր եղբայրներով մէկտեղ: անմիջապէս սկսան եկեղեցոյ բակին մէջ գաւազանները իրարու գլուխ տեղադրելու շատ զուգանքով ձեռք տեղադրելու: Կըտուի պահուն մի քանի գաղթական կտրիչ տղաք մտնալով դրան կից ելաւ սենեակը եւ հաւաքելով ամբողջ բանակները տարին յարգելի Տիար Մանուկ Իվանցօղլուի առնը եւ նա անմիջապէս զրկեց կրթական նախարարութեան եւ հիմա վճռուած էր Դանիէլը մի քանի օրուայ մէջ յանձնէ ամբողջ հաշիւները եւ հետանայ եկեղեցոյ դռնէն:

Տօնու Դանիէլ Երրորդ անգամ կը յարձակի եկեղեցոյ դռնէն վայրենի վազրի նման, բայց նորէն դուրս կը նետուի սողոց քաղցր կենդանի: Երանելի մարդ հիմա ստուգուած պէտքով դուրս: Դանիէլի ազգականները կսկսին պոռալ, ճշտելու անմիջապէս վրայ կը հասնին ահրոթեան պաշտօնանները եւ պահպան ծանոթաններ նայ: Դանիէլի եւ իր եղբայրներու մարմինները կապտուեցան ու լախերին պատուելի է: Գլուխին ճեղքուելի վերջը մի քանի ձեռքակալութիւններ կը լլանն եւ անմիջապէս մի քանի ժամ վերջը կարճակուին:

Ու հիմայ նոր մասնախումբ կազմուած է առժամանակեայ հետեւեալ անձերէ: Տիարք Սրիթօօղլի, Անտուէլ Ետաքիմեան, Պ. Ծապուրով եւ Թ. Միլիտօն: Փառք որ պատեցաւ եկեղեցին ու դարձեց այդ հրէի ձեռքէն: Եւ հիմայ մեծ յոյս ունինք որ Պուրջէշու ալ պիտի ունենայ իր ազգ. փայլուն օրերը: քահանայութեան Պ. վարժապետի աչքը լոյս... «Բնար» ընկերութիւնը կանոնաւոր եւ աւելի յաջող պիտի շարունակէ իր պաշտօնը եկեղեցոյ քառանկար երգասացութեամբ: աւելի մանրամասն տեղեկութիւններ յաջորդ անգամ:

Պարբեր լուրք մը կը կարգուի: Այսօր անբարկապետացաւ հոս Նիքոլայ Միլիթօֆ անուն պոլկար մը, որուն վրայ կասկածներ կ'առնու եղբր թէ պոլի: Կօմիտէի անդամներէն է եւ եկած է հոս դրամ հաւաքելու յայտուել յեղափոխութեան: Կը կարծուի թէ ուրիշ ընկերներ եւ պոլի եւ ատենց դէմ առմէն կոտորուած թիւը շատ վատ գիրք բռնած է եւ խստիւ պատժի կենթարկէ, տարաբար պաշտարներ... «Անիվէրսուլ» իր արտաքին գործերու մէջ կը գրէ թէ: Կ. Պուրիս Պէտրէք սէրէ գինով եւրոպացի մը սկսեց է պոռալ «Սուլթանը սատկեցաւ» շատ մը մարդիկ հաւաքուելով բռնելով կը տանին Համբարն հօթէլը բայց թիշ մը վերջը կը հասկցուի որ գինով եւրոպացին ոտու հեպատոսարանի քարտուղարն է եղբր: ու կարճակուի:

Երանի թէ իրաւի սատկած ըլլար: Հաւելիք

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՏԵ ԻՌՅԱՍՈՒՄԱՆ ԳՈՐԾՈՑ ՄԱՍՆԱՍԻՐՈՒՆ

Վառնա եւ ուրիշ տեղեր ժողովներ կը լլան օրպէսզի ընտրուեն մէկը որ երթայ Սօֆիա առաջնորդի ընտրութեան ձայն տայ ժողովրդեան կողմանէ, իսկ այս տեղ այդպիսի դիտաւորութիւն մը չէր տեսնուէր ձեր կողմանէ: Երիտասարդներս իրարու կը հարցնէինք թէ արդեօք մասնախումբը առանց ժողովրդեան կամքը հարցնելու, իր մէջէն Սարաֆեան մը կամ ուրիշ մը պիտի գրկէ որ երթայ հայր սուրբ լաւ է ըսելով քէն տայ անոր: Իսկ այսօր կը լսեմ թէ ընտրողաց ցանկ մը կը պատրաստէք եղբր որ այս տեղ ալ այսպիսի մէկը ընտրուի, բայց կը խնդրեմ որ բարենորոգում մը մտնէք ձեր այդ ցանկին մէջ, եկեղեցոյս սոմարը աչքի առնելու նմանալով, ինչու որ կը ճանչնամ այնպիսի երիտասարդներ, որոնք 25-26 տարին լրացուցած են եւ թաղապետութեան կողմանէ իսկ ընտրողական աստիճանին, բայց ձեր ցանկին մէջ անոնց անունները չէին երևեր անգեալ տարի, և որուն համար խնդիր ալ ծագեցաւ այն ատեն: ուստի ձեր ուշադրութիւնը կը հրաձգուի ձեր ուշադրութեան վրայ:

Նոյնպէս կը լսենք թէ տեղւոյս քահանայ կուզէք եղբր ճամբուող զնել, ըսելով թէ ամալիքը չենք կարող ընել, եթէ միայն իրաւունքովը կրնաս պարել կեցիք: Լաւ ծնունդ համեմատ ժամակոյցին կնկան մի գրպարտութեան վրայ լինելով կուզէք եղբր քահանայ հրաժարեցնելք եթէ իրօնօմեայ ընելու պէտք ունիք, հրաժարեցուցէք ժամկոտն: որ իր բազմանգամ ընդամենով եւ բարեկամներով եկեղեցին կը բար...

մարմինը անձնաբարձը ու հետո ընկերային յարաբերութիւնները վրայ է հիմնուած իր գոյութիւնը՝ ապա ընկերով լոկ մեր ներքին, սեփական ուժերը վերայ: Նրա գործը սուրբ է եւ ընկերային սէրը, հաւատարմութիւնն ու եռանդն են կենդանի գործի առհասարակ: Երբ որ անհատը գրաւակալը: Ցաւի է որ գտնուել են մեզանում մեր փրկաւէտ միջոցին, զիմի՞ն դաւաճանաբար ձեռք մեկնող հայեր... Դրա կախի՞ծը ամենախորը պիտի լինի:

Ասկայն սրանից մի տարի առաջ Բաթումում սպանուած Միլիթօն Բէտիսեանի դիակը եւ ամսոյս 3ին կալաֆաթում կարապետ Մարտիրոսեանի վրայ գործուած տեղօրը ցոյց են տալիս այն փաստը, թէ հայ յեզ. մարմինը իր ընկերային յարաբերութիւնները պատու է պէտք եղած բարձրութեան վրայ՝ տալով վրէժի այժման հատուցումը դաւաճաններին:

Էմիլ Եղաբեկեան Դեբր. 10 օգոստ. 1903 ՎԵՐՋ

ՎԱՏՈՒԹԻՒՆ ԹԷ ՔՅՉՈՒԹԻՒՆ

Շարժումի անցելու շարժում օրուան թիւին մէջ մեզ զգացողութիւն մը խորագրի ներքե կարգ մը ծիծաղելի գաղափարներ հրապարակ նետուած են: Տղայակամ յորհրտանք մը, Պ. Յօլուածապիլը ուզած է պաշտպանի դերը ստանձնել այնպիսի դասակարգի մը, որուն ամէնայետին անգամը անգամ վրայադրուած մը պիտի զգայ իւր ուսուցչական արժանապատւութեան, իր պաշտպանութեանը համար գրուած, այլ իր դատապարտութիւնն իսկ եղող այդ տողերը կարգալով:

Տարեկան տարիներ առաջուան վարժարաններու խարխաւած, մութ շէնքերը ու միւսէրները բազմաթիւ թեան գլուխով աճուած շէնքերու և գրասեղաններու հետ, առկից փառքի մեծ բաժին մը հանել կուզուի հայ ուսուցչութեան, և սակայն չը մտնանք որ միւսնոյն փոփոխութիւնները եղած են նաև ամենայետին արձարաններու և խանութներու մէջ, ատենք ալ արդեօք հայ ուսուցչութեան կը պատիւնք:

Երբ մեր հրապարակները կողոզեն մանկավարժական գիւրուսոյց մէջնոս նելով պատրաստուած եւ ուսպական ամէն տեսակ դասագրքեր, և միւս կողմանէ մեր հրատարակութիւնները գեղեցիկ պատկերներով և ամբողջ աստիճանով օժտելու գիւրիւն միջոցներ կընձեռուին մեզ, մեր դատապարտութեան ցանցաւ երևումը կարժէ՞ հայ ուսուցչութեան անձնութեան վերաբերել:

Երբ երկրի մը մէջ, ուր հակառակ կառավարական օրէնքներով ձեռք վարժարաններէն վտարուած ըլլալուն շատ յաճախակի գանգատներ կը լսուին ձեռողներու և պաշտօնական մարմիններու կողմէ, տղաքներ ձեռուած ըլլալուն համար, այդ կիսով չափ եղած բարեփոխութեան մէջ կը նախք տեսնել հայ ուսուցչութեան պարտաճանաչութիւնը, յիմի գործութեան մեղմացումը: Իկատելի է առ հասարակ բոլոր դասակարգ հայերու և մարմինու քով: Նոյն իսկ ամէնէն սղտ ծնողներ, առանց ուսուցիչներ ըլլալու, այսօր չեն դիմեր այն բար...

2. Փեշխուրան ան 20 Օգոստոս 1903 Վառնա

բարձր վիճակէն ընդհանրապէս զրկուած 20-30 տարեկան փառանակի ոգոյն պահանջն է այդ այդ փոփոխութիւնները բնական օրէնքով պէտք է ըլլան:

Եղած անտեղի բազմաթիւները ոչ մէկ կերպով չեն ապացուցաներ ինչ մեր վարժարաններուն մէջ նոր սերունդը խամբելու դատապարտուած չէ, և ընդհակառակը կուզան հաստատել ինչ որ ըսած ենք:

Նախկին պատուելի ուսուցիչներու ձեռքէն մատուց սերնդեան ողջամբ անցնելը նախախնամական հրաշք մը կը համարուի: հակառակը չպիտի ըսենք, միայն կը մնայ գիտնալ թէ մենք, նոր ուսուցիչներս, որ հին գրութեան մը աշակերտներն ենք, և այդ հին սկզբունքներով անած ու մեծցած ենք, ինչ ըրած ենք մինչև հիմա այդ միւսնոյն աւերուած իր գործ չգնելու համար նոր սերնդեան վրայ մենք ցոյց տուինք արդի դաստիարակութեան յոռի ուղղութիւնը, իսկ ատոր հակառակը ապացուցանող ոչ մէկ փաստ չերեցաւ:

Այժմու վարժարանները ծուրութեան, յորանոյ մի պատասպաններ չըլլալով, նորահաս սերունդներուն ջիւղը գործնելու և կորովը պնդացրնելու մարդարաններ ըլլալ կը կարծուին, ինչ հիման վրայ սակայն մեր ֆիզիքական և բարոյական դաստիարակութեան յոռի ուղղութիւնը քանի որ ցոյց տուինք:

Ի լրումն ամենայնի, կուզենք ժողովրդեան կողմէն թէ այժմու դաստիարակութիւնը բոլորը կը հատարուին մանկավարժական սկզբունքներու համաձայն: Ճշմարտութեան դէմ բացարձակապէս մեղանչել կը ընշանակէ այս: Ինչպէս կրնանք մենք, ուսուցիչներս, իրարու մասին վկայութիւն տալ, երբ մեզմէ ունէ մէկը չէ հետաքրքրուած իր պաշտօնակցին ունէ մէկ դասախօսութեան ներկայ գտնուելու: Տարւոյն սկիզբը վարժարան կը մտնենք, և իր տարեշրջանը կը լինայ, ո՛չ ոք չը գիտեր թէ իր միւս պաշտօնակիցը երբ իրենց դասերը ինչ չափով աւանդած են և ինչ ուղղութեամբ:

Որչափ ատեն որ ոչակեցիտի մը դաստիարակութեան վրայ մէկէ աւելի ուսուցիչներ են որ հոգ կը տանին, ուսուցչի մը անհասական ճիւղերը չեն կրնար ունէ արդիւնք ունենալ: հետեւաբար սոյ դասակարգի օգուտը և ջանքերը չենք կրնար հայ ուսուցչութեան պարտաճանաչութեան իբր նշան ընդունիլ:

Կրթական խնդրոյ մէջ կորուստ քայլ մը տեսնու համար, հաւաքական համիթօց ճիւղեր պէտք են, առանց այդ ուրախատիլ երևոյթին, հայ ուսուցչութիւնը մեղմութեան մէջ թաղուած կրնանք համարել:

Այսօր բացարձակ ճշմարտութիւն է որ հայ ուսուցչութիւնը մինչև այս վայրկեան հաւաքական գործունէութեան ոչ մէկ փափաք չէ յայտնած, և այդ մասին եղած գիտմունքու առջև այ շատ պաղուեթեամբ վարուած է: Այս այսպէս ըլլալով, երբ իրողութիւնները իրենց իսկական գոյնով ցոյց կուտանք, առանց ի նկատի ունենալու այն անտեղի գայրութիւնը, զոր մեզի գէժ պիտի գրգռենք, ատով ոչ թէ վատութիւն մը չգործած կըլանք այլ քաղութիւն մը:

2. Փեշխուրան ան 20 Օգոստոս 1903 Վառնա

նակի, եկեղեցիին իւղէն բիլա- կուտեն, փայտն ու ածուխը պօլ պօլ կը վառեն, քէֆ կընեն. անգին եկեղեցին երեսի վրայ կը մնայ, ցերեկը ժամակոչ կը փնտռեն չկայ, ուրիշ տեղ աշխատելու գացեր է, իսկ գիշերը գինով մինչև ուշ ատեն գինէտունը կը մնայ, եկեղեցւոյ բակին գոնեւրը երբեմն մինչև առտու բաց կը մնան:

— Իսկ գալով քահանային, ժողովուրդը իրմէ գոհ է. խոնարհ և յարմարող բնաւորութիւն մը ունի, առաջիններուն պէս խառկիչ չէ, և որովհետեւ ջոջն ու աղքատը իրարմէ չտարբերեր, այլ հաւասար ժողովուրդ կը ճանչնայ, կարելի է ատոր համար ջոջերուդ գիւր չեկա: Կը յուսաւք թէ անոր յաջորդը գոհ կը ձգէ ժողովուրդը:

Իսկ գերեզմանական խնդիրը բոլորովին անպէտք բան մըն է. անդին թաղապետութենէն կիմացնեն թէ եկեղեցւոյ կալուածները փլչելու վրայ են, կամ նորոգեցէք և կամ կը փլցունենք: Դուք ասդին Տ. Գասպար Նէմցէին 80 ֆրանք կուտաք որ գերեզմանատան մէջ ճամբայ շինելու համար այնպիսի յատակագիր մը պատրաստէ որ առանց հարուստներու գերեզմանաց դպչելու, միայն աղքատաց գերեզմաններու վրայէն անցնի: Ժողովուրդը թող կուտայ որ իրենց գերեզմաններ կոխան ըլլան, երկու անգամ է որ գերեզմանատան մէջ կուեննր կը ծագին և անցեալ օր ալ ոստիկան կը բերէք կանխա, աս ալ նորութիւն մըն է որ աղքային գործերու ոստիկանութիւնը կը խառնէք:

Արդէն բաւական ժամանակէ ի վեր հանդարտած էր ժողովուրդը. պէտք էր նոր խնդիր մը մէջտեղ հանել:

Ֆիլիպպի

20 Օգոստոս 1903
Ֆիլիպպի

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Մանդուկէ» կը հազորդէ որ վերջին օրերս ծերունի Հայրապետը շատ նեղը ձգած են, ստիպելով որ մինչև շաբաթ մը անպատճառ ստորագրէ իրեն ներկայացուած պաշտօնական թղթերը, եկեղեցական կալուածներու մասին: Ե. Ս. Օծուխը կը պատասխանէ թէ ինք չի կրնար անմիջապէս ստորագրել, վասն զի ժողով պիտի կազմէ և խորհրդակցութիւն կատարէ. և թէ ինք պատասխանատու է ընդհանուր եկեղեցիին առջև ու պարտաւորուած է հայրի դնել նաև գիտողութիւնները Ալեմտեան Հոյոց, որոնք սրդէն կը բողոքեն:

— Գալֆայեան որբանոցի նորոգութեան համար, տիկին Աննա էստեան 230 ոսկի նուիրեր է:

— Այսօր Վառնայի հայ հասարակութեան ցրուեցաւ շրջաբարական մը ընտրողական ժողովին կազմէ, որ և ստորագրուած է նախագահ Տ. Մարտիրոսեան քահանայ Մարտիրոսեանի կողմէ:

Շրջաբարականին մէջ գրուած են նաև ընտրութեան վերաբերեալ օրէնքները, որոնց հիման վրայ հասարակութեան կը բացատրուի թէ ինչպէս պիտի կատարուի ընտրութիւնը:

Ընտրութեան օրը նշանակուած է օգոստոս 31, կիրակի օրը:

— Կը յիշուի թէ Իզմիրի հայոց թաղը, գիշեր մը ներկարար թաշատուր սպաննուած էր իր տան բակին մէջ և ոճրագործը փախած ատեն մեռցուցած էր նաև ոստիկան մը Մէհմէտ չավուշ որ զինքը պիտի ձերբակալէր: Իզմիրի եղեռնադատատեանը մահուան դատապարտեց ոճրագործը, Հայկ Բաթաբանեանը, որ սրդէն բանտին մէջ մեռաւ իր ստացած վերքերէն, քանի որ արդէն վիրաւոր վիճակի մէջ բանտ տարուած էր:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գանի օրերէ ի վեր Իշխան Ֆէրտինանտ արտասահմանէն վերադարձեր է Վառնա և Էվքսինօկրատի պալատին մէջ կը բնակի:

Բոլոր նախարարները Իշխանին քով եկած էին կորիւնոր գործերու մասին խորհրդակցելու ու պալատին մէջ կը բնակէին:

Դժբախտարար երէկ, ելեւմուտից նախարար պարոն Մանուշէֆ պալատին քով ծովուն մէջ լողանալու ատեն ծովը շատ մնալով սրտի հիւանդութեան մը պատճառով մեռեր է:

Մանրամասնութիւնք հետեւեալ թիւին մէջ:

— Ժիմնապնէրու սւսուցիչներու համաժողովին պիւրօն որոշումով մը իր համակրութիւնը յայտնած է Մակեդոնացի ապստամբներուն:

— Սօֆիայի քաղաքապետութիւնը պարտքերով ծանրաբեռնուած ըլլալով երկու երեք ամիսէ ի վեր պաշտօնեաներու ամսականը չի կրնար վճարել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Արևելեան երկաթուղիներ ընկերութիւնը անցեալ շաբաթ երեկոյին թուրքաց հանրային շինութեան նախարարէն գրութիւն մը ստացեր է, որով կը

պահանջուի եղբր Էտիրէի գծին վրայ գիշերային գնացքները դադարին, նոյն միջոցին ննջարանի վագոններու ընկերութիւնն ալ ցանկութիւն յայտնած էր էքսըրէսը դադարեցնել:

Շաբաթ մը երկաթուղային ընկերութեան անօրինութիւնը գնացքներու ընթացքը կարգադրեր է թուրք կառավարութեան պահանջին համեմատ, բայց կիրակի գիշեր անօրինութիւնը ընդունել է Սուլթանի մէկ իրատեն, որով կը պատուիրուի վերականգնել գիշերային գնացքը: Այդ պատուէրն ալ իսկոյն կատարուեր է:

Սուլթանը այդ իրատեն հանրէ, որովհետեւ վախցեր է որ գիշերային գնացքներու գաղարու մը վատ ապատրութիւն պիտի գործէ օտար երկիրներու մէջ:

— Պոլսէն կը հեռագրեն օգոստոս 19ին որ Բ. դրսն և հիւպատոսներու սուած տեղեկութեանց համաձայն՝ օգոստոս ամսուն տեղի ունեցած ընդհարումներուն միջոցին սպանուեր են 1109 Մակեդոնացի ապստամբներ և 80 հոգի վիրաւորուեր են. 312 թուրք զինուոր սպանուեր են և 19 հոգի վիրաւորուեր:

Քրիստոնեայ գիւղացիներ ըսպանուեր են 86 հոգի և վիրաւորուեր 3 հոգի. իսկ թուրք գիւղացիներէն սպանուեր են 80 հոգի և վիրաւորուեր 10 հոգի:

Բայց այդ տեղեկութիւնները ճիշտ չեն կարծուիր, և կը կարծուի որ երկու կողմէն ալ աւելի մեծ կորուստներ կան:

— Սուլթանի գահակալութեան առթիւ Պոլսոյ մէջ ձերբակալուեր են բազմաթիւ Պուլկարներ և Հայեր. կը կարծուի թէ տօնէն վերջը բոլորն ալ սզատ պիտի արձակուին:

— «Իման» իր նախորդ համարներէն միոյն մէջ հեռագիր մը ունէր հրատարակած, որով կը հազորդէր քիսն. որ Ռոտտոտօի մէջ Հայերու կոտորած տեղի ունեցեր է:

— Երկուշաբթի օր հրդեհ մը մոխիր դարձուց Պալքէսէրի թաղապետական պաշտօնարանը և 11 խանութներ:

— Իզմիրէն կը գրեն թէ, քաղաքին մէջ տիրող ծաղկախտը վերջին օրերս սաստկացած է, Օգոստոս 1էն 13, 63 հոգի մեռած են. մինչամբողջ յուլիս մէջ 80 հոգի մեռած էին:

— Վերջերս տեղացոյ անձրեւները մեծ քանակութեամբ հասցուցին Իզմիրի և Մազինիայի այգիներուն և թուղբուն. կը կարծուի թէ 100,000 կենդանար խաղող բնաջինջ եղած է:

ՇԵՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

«Բարկէն Սիւնի» ընթերցարանիս վարչութիւնը կուգայ հրատարակել իր շնորակալութիւնը յայտնել Բրաւմատիօի հետեւեալ ազգայիններուն, որոնք Տ. Սարգիս հօր ձեռքով 12 լիվ նուիրած են ընթերցարանիս. 1903օգոս. 22

Վառնայ Վարչութիւն
Միքայել Տայեան 4.50 լիվ, Ա. Արամեան 2 լիվ, Ասատուր Աւետիսեան 2 լիվ, Պետրոս Մեսրոպեան 1 լիվ, Արտաշէս Պ. Չէքիրկէեան 1 լիվ, Պաշտուր Մեւլիքեան 2 լիվ, Տիգրան Նախեան 50 Ս. Հ. Նուպար Սիրտեանեան 1 Տր. Գեորգ Մելիքօֆ 4 Տր.

Ա Ձ Դ

Տօպրիչի համար Չայնաուր. ու. սուցի մը պէտքը կայ, փափաքողք կրնան դիմել տեղույս Խաչ. Խորհրդոյ:

Ի պիմաց թաղ. Խորհրդոյ. Ընդունեցէք յարգանքներս Ն. Սիսակեան (Կնիֆ) 47 Օգոստոս 1903 Տօպրիչ

ԱՐՆԵՆԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԿՐԹ ԱՏՈՒՆ

Լօզան, Զուիցերիա
Երկուրդ ասի

Բ. տարեշրջանի դասախօսութիւնները կսկսին Սեպտ 1/4ին Արևելեան կամ հայկական կրթատունը կընդունի 10-20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ձեռքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական սուղլ ու լուրջ կրթութիւն մը, ներդաշնակօրէն և սերտիւ միացած ազգային հիմնական կրթութեան հետ: Հայ աշակերտներուն կաւանդուին, և այս առանց ու է քնարուժի, հայերէն լեզու, հայ մատենագրութեան պատմութ. եւ այլն: Ընտանեկան կեանք:

Կարելի է նաև օգտուել տեղական հանրաժանութի պարոններէն:

Կրթատան տարեթոշակը, հակառակ ընծայուած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, ունորինակ կերպով աման է:

Կրթատան յայտագիրն ամէն ուղղի կը շրկուի:

ՏՆՕՐԵՆ
Մ. Նաչպանեան
Տօքթ. Ի գիտութիւն համալսարանական մասնաւոր-ուսուցիչ
Հասցէ՝
Լօզան 4.
Լօզան. — Սիւիս

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна